ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Ապարան համայնքի ավագանու
19.03.2025 թ. թիվ 30-Ա որոշման

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ապարան համայնքի 2024թ. գործունեությունը նպատակաուղղված է եղել համայնքի 2024թ. բյուջեի կատարումն ապահովելու և դրա միջոցով ՏԱՊ ծրագրում ներառված՝ համայնքի կենսագործունեության բոլոր ուղղությունների բնականոն գործունեությունն ու բնակավայրերում առկա առաջնային խնդիրների լուծմանը, բնակավայրերի կայուն ու համաչափ զարգացման ապահովմանը:
Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ համայնքային կայքի, սոց. ցանցերի և բնակչության հետ ամենօրյա հանդիպումների միջոցով:
Ավագանու որոշումները, համայնքապետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականները, համայնքապետարանի գործունեության հիմնական ուղղությունները մշտապես լուսաբանվել են համայնքային կայքում, որը հասու է եղել համայնքի բոլոր բնակիչներին:
2024թ. ընթացքում կայացել է ավագանու 12 նիստ, ընդունվել են 207 որոշումներ:
Ընդունվել են համայնքապետի 1436 որոշումներ, 332 կարգադրություններ:
Տարվա ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել սեփական եկամուտների ապահովման հնարավոր աղբյուրների համալրման, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գանձման և համայնքային խնդիրների լուծման սերտ կապի գիտակցման անհրաժեշտության վերաբերյալ բնակչության շրջանում բացատրական աշխատանքների ծավալման և զարգացման ուղղությամբ:
Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել անշարժ և շարժական գույքերի հաշվառման շտեմարանների ճշտգրման, տեղական տուրքերի և վճարների սահմանման ու ճիշտ հաշվարկման, համայնքային եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճշգրիտ արտահայտման և այդ ուղղությամբ հարկատուների շրջանում տարվող աշխատանքների ակտիվացման, նրանց իրազեկվածության բարձրացման, հրապարակայնության ու թափանցիկության ապահովման ուղղությամբ:
Դրանց շնորհիվ շտեմարանները դարձել են ավելի կառավարելի և վերահսկելի, հասանելի բոլոր հարկատուներին ու բնակիչներին:
Արդյունքում՝ արձանագրվում են պարտաճանաչ հարկատուների թվաքանակի աճ, ինչպես նաև սեփական եկամուտների համաչափ ավելացման դրսևորումներ:
Սեփական եկամուտների հավաքագրման գործում տարվում են ամենօրյա օպերատիվ հաշվառում և վերլուծություն, բացատրական և նախազգուշական աշխատանքներ: Յուրաքանչյուր ամսվա արդյունքների վերլուծությունները և առաջադրվող խնդիրները ներկայացվում են վարչական ղեկավարներին՝ այն ի գիտություն ընդունելու և կատարումն ապահովելու համար: Սահմանվել են ամենամսյա հաշվետվությունների ներկայացման և դրանց արդյունքներից բխող քայլերի կառավարման համակարգ:

2024թ. համայնքի վարչական բյուջեն կատարվել է 102,6 %-

Համայնքի 2024 թ բյուջեի ձևավորման աղբյուրները և կատարված ցուցանիշները՝

Եկամտատեսակներ	Պլան /հազ. դրամ/	Կատարված	Կատ. %
ՀՀ կառավարության կողմից տրված դոտացիա	947.584.000	947.584.000	100
ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսեր	2.227.200	2.227.200	100
Արվեստի դպրոցին տրված սուբվենցիա	1.961.000	1.961.000	100
Մանկապարտեզների սաների վճարի փոխհատուցում	5.439.700	5.439.700	100
Համայնքի սեփական եկամուտներ	420.000.000	455.405.506	108,4
Ընդամենը վարչական բյուջեն՝	1.377.211.900	1.412.617.406	102,6

2024 թ բյուջեի սեփական եկամուտների պլանը կատարվել է 108,4 %-ով:

N	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐ	Պլան /հազ.դրամ/	Կատարված /հազ.դրամ/	Կատարման %
1	Հողի հարկ	15.640.000	21.457.149	137
2	Գույքահարկ /փոխադրամիջոցի	162.160.000	184.857.579	114
3	Անշարժ գույքի հարկ	75.340.000	79.670.105	105,7
4	Հողի և գույքի վարձավճար	42.850.000	35.791.880	94,5
5	Գույքահարկ/շենք, շինություն/	4.910.000	2.350.811	44
6	Տուրքեր և վճարներ	58.650.000	90.574.449	154,4
7	Վարձավճարներ /աղբահանություն, խմելու ջուր/	60.450.000	40.903.533	67,7
Ընդամենը վարչական բյուջե՝		420.000.000	455.405.506	108,4
	Կապիտալ գործառույթներից մուտքեր՝	1.000.000.000	699.220.414	69,92

2024 թ համայնքի բյուջեի սեփական եկամուտները պլանավորված 420.000.000 միլիոն դրամի դիմաց փաստացի կատարվել է 455.405.506 դրամ, կամ կատարվել է՝ 108,4 %-ով:
Ընթացիք հարկերի վճարմանը համընթաց դրական միտումներ են նկատվում նախորդ տարիների պարտքային պարտավորությունների նվազեցման ուղղությամբ, որի արդյունքում 2023 թ համեմատությամբ 2024 թ-ին հավաքագրման ցուցանիշը գերազանցվել է 50.665.386 դրամով, կամ՝ 12,5 %-ի չափով:
2024 թ առաջադրանքները չեն կատարվել Արագած, Ջրամբար, Վարդենիս, Քուչակ բնակավայրերում, Իսկ Մելիքգյուղի թերակատարումը պայմանավորված է՝ Մեգա Գոլդ ՍՊ ընկերության տարեկան 14,0 միլիոն հողի վարձավճարի չվճարմամբ, որը մինչ օրս մշտապես կատարվել է դատական կարգով:
Առանձնակի դիտարկման խնդիր ունեն աղբահանության և խմելու ջրի մատակարարման ծառայությունների վարձավճարների գանձումների վիճակը, որոնք գյուղական բնակավայրերի համար հանդիսանալով խոշորացումից հետո կիրառվող վճարումներ, դեռևս ամբողջությամբ չեն կարգավորվել և հաճախ առաջացնում են դժվարություններ:
Չնայած դրան, ձեռնարկվող քայլերը աստիճանաբար տալիս են դրական արդյունքներ:
Այսպես, 2024 թ աղբահանության և խմելու ջրի ծառայությունների վարձավճարների գանձումը կազմել է 40.903.533 դրամ, 2023 թ՝ 32.229.520 դրամի դիմաց, աճը կազմել է 8.674.013 դրամ, կամ՝ 27 %-ով, ինչը դրական ձեռքբերում է, սակայն՝ ոչ բավարար:
Աղբահանության վարձավճարի գանձման վիճակի բարելավմանը լրջորեն չեն մոտենում Վարդենիս, Ջրամբար, Ձորագլուխ, Լուսագյուղ, Քուչակ, իսկ խմելլու ջրի վարձավճարների գանձմանը՝ Ջրամբար, Եղիպատրուշ, Վարդենիս, Ձորագլուխ, Թթուջուր, Լուսագյուղ, Շենավան, Քուչակ բնակավայրերում:
Խմելու ջրի վարձավճարների հավաքագրման մասով՝ պլանավորված 22.540.000 դրամի դիմաց գանձվել է 13.551.100 դրամ, կամ կատարվել է 60,1 %-ով, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում 2.836.406 դրամով, կամ աճը կազմել է 26,47 % :
Աղբահանության և խմելու ջրի ծառայությունների դիմաց նախատեսված 60.450.000 դրամ վարձավճարի դիմաց գանձվել է՝ 40.903.500 դրամ, կամ առաջադրանքը կատարվել է 67,7 % -ով:
Ընդհանուր առաջադրանքը կատարվել է Արայի, Երնջատափ, Շողակն գյուղերում, դրական արդյունքներ են ապահովել Մելիքգյուղ, Հարթավան, Երնջատափ, Վարդենուտ, Ափնագյուղ, Ապարան բնակավայրերը:
Վիճակն անբավարար է Եղիպատրուշ, Վարդենիս, Ջրամբար, Ձորագլուխ, Քուչակ, Լուսագյուղ գյուղերում, որոնցում գանձումները կազմել են 24-ից 38 %, որը դատապարտելի և անհամատեղելի վերաբերմունք և մոտեցում է՝ մատուցվող ծառայությունների հանդեպ:
Խմելու ջրի ծառայության դիմաց գանձված 13.551.100 դրամը կազմում է այդ ծառայության համար կատարված ծախսերի ընդամենը 28 % -ը: Այսպես, 2024 թվականին խմելու ջրի ծառայության վրա կատարվել են հետևյալ ծախսերը՝ սպասարկողների՝ փականագործ-կարգավորիչների աշխատավարձի ֆոնդը կազմել է 24.000.000 դրամ, խմելու ջրի պոմպակայանների համար ծախսվել է 8.102.000 դրամի էլեկտրական հոսանք, Վեոլիա ջուր ընկերությունից գնվել է 12.181.000 դրամի խմելու ջուր, ընդամենը՝ 44.283.000 դրամ պարտադիր կատարված ծախսեր, համակարգի վերանորոգման և շահագործման նպատակով կատարված ծախսերը կազմել են՝ 14.117.000 դրամ:
Ընդհանուրը՝ 58.400.000 դրամ:
Վերոհիշյալ խնդիրերի հիմնական պատճառը կոմունալ ծառայության կողմից աղբահանության և խմելու ջրի ծառայությունների կոմերցիոն ուղղվածության՝ պայմանագրերի կնքման, վարձավճարների հաշվարկային բազաների ստեղծման և բավարար վարման նկատմամբ մինչև օրս դրսևորած անպատասխանատու և չհամակարգված վերաբերմունքն է, ինչը շտապ կարգավորման կարիք ունի:
Համայնքապետարանի համապատասխան բաժինները և վարչական ղեկավարները պարտավոր են վերոհիշյալ խնդիրների կարգավորման հարցով կոմունալ ծառայությանը ցուցաբերելու աջակցություն:
Լուրջ բացթողումներ կան նաև հողերի վարձակալության ուղղությամբ:
Վարդենիս, Վարդենուտ, Արայի, Շողակն, Մելիքգյուղ բնակավայրերում, դեռևս համայնքի խոշորացումից առաջ, առանձին քաղաքացիներ չունենալով վարձակալության իրավական ձևակերպումներ՝ ներքին պայմանագրերով տնօրինում են հողամասերի և վճարում վարձավճարներ:
Բացի այդ, նախկինում կիրառվել է գործելաոճ, համաձայն որի՝ նույն հողատարածքի առանձին հատվածներ տնօրինվում են տարբեր քաղաքացիների կողմից, սակայն ձևակերպված են մեկ անձի անունով, սակայն որպես ենթավարձակալություններ ձևակերպված չեն: Այն պատճառ է հանդիսանում վարձավճարների թերի և ոչ ժամանակին գանձմանը:
Այդ խնդիրները հրատապ լուծման ու կարգավորման կարիք ունեն, որոնց ուղղությամբ վարչական ղեկավարները համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժինների հետ պետք է հետևողական աշխատանքներ ծավալեն՝ նմանօրինակ բոլոր խնդիրներին օրինական լուծումներ տալու համար:
Խնդրի կարգավորման հնարավոր տարբերակներից կարող է հանդիսանալ նախապատվության իրավունք ունեցողների նկատմամբ վարձակալությունների վերաձևակերպման տարբերակի կիրառումը:
Հարկ է ընդգծել, որ հարկերի գանձման աշխատանքներն ավելի պատշաճորեն կատարելու, ապառքները նվազագույնի հասցնելու գործում առկա են նաև մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ:
Դեռևս մեծ թիվ են կազմում մահացած հարկատուների ժառանգություն չբացողները, բնակավայրից երկար տարիներ բացակայողները, որոնց ապառքները կազմում են ընդհանուր ապառքների 20-25%:

2021 թ-ից սկսած հարկային բազայի հաշվառումից դուրս մնացած հարկատուներ կան, ովքեր մինչև օրս իրենց սեփականությունները չեն գրանցել և չեն ստացել պետական գրանցում:
Դեռևս քիչ չեն նաև տարբեր պատճառներով հարկերը ժամանակին չվճարողները, որոնց մոտ այդպես էլ չի ձևավորվում համայնքի նկատմամբ պատասխանատվության և քաղաքացիական պարտքի զգացումը, փոխարենը՝ կարիքի դեպքում ավելանում են պահանջատիրական միտումները:
2024 թ ընթացքում համայնքապետարանի աշխատակազմի կողմից անպարտաճանաչ հարկատուների նկատմամբ հարուցվել են 195 վարչական վարույթներ, որոնցից 92- ն ուղարկվել են հարկադիր կատարման ծառայությունների վարույթ, 2024 թ-ին հարուցված ևս 80 գործ ուղարկվել է վերջերս:
Հարուցված գործեր ԴԱՀԿ –ում կան նաև նախորդ տարիներից:
Խնդիր է դրվում ավելի ուժեղացնելու վարչական միջոցների կիրառման գործառույթները՝ մինչև հարկատուների կողմից ապահովվի վճարումների կանոնավորումը:
Չնայած տեղական տուրքերի և վճարների պլանը կատարվել է 109 %, սակայն շարունակում է խնդիր մնալ դրանք սահմանված ժամկետում՝ մինչև գործունեության ծավալումը, վճարելու և համապատասխան թույլտվությունը ժամանակին ստանալու հանգամանքը: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով նույնպես զգացվում են վարչական միջոցների կիրառման անհրաժեշտություն:
31.12.2024 թ դրությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց հողի հարկի ապառքները կազմել են՝ 57.768.782 դրամ, շենք-շինություններինը՝ 9.736.124 դրամ, փոխադրամիջոցներինը՝ 28.609.274 դրամ, ընդհանուրը՝ 96.114.180 դրամ: 31.12.2024 թ դրությամբ անշարժ գույքի հարկերի ապառքները կազմել են՝
Ֆիզիկական անձանց՝ 81.715.091 դրամ, տույժերը՝ 11.456.088 դրամ, ընդամենը՝ 93.171.179 դրամ:
Իրավաբանական անձանց՝ 3.971.476 դրամ, տույժերը՝ 449.648 դրամ, ընդամենը՝ 4.421.124 դրամ:
Գույքահարկի մասով՝
Ֆիզիկական անձանց՝ 94. 076.872 դրամ, տույժը՝ 11.101.793 դրամ, ընդամենը՝ 105.178.665 դրամ:
Իրավաբանական անձանց՝ 3.971.476 դրամ, տույժը՝ 449.648 դրամ, ընդամենը՝ 43421.124 դրամ:
2021-2022-2023-2024 թթ ֆիզիկական և իրավաբանական անձանց անշարժ և շարժական գույքերի հարկային պարտավորությունների ընդհանուր ապառքը կազմել է 206.252.462 դրամ:
Ընդ որում, 2024 թ տարեկան հաշվարկային ցուցանիշը կազմել է 292.983.742 դրամ՝ նախորդ տարվա՝ 247.511.028 դրամի դիմաց:
Նախորդ տարիների ապառքը /Հողի հարկի մինչև 2021 թ, և 2021-2024 թթ՝ անշարժ և շարժական գույքերի հարկերի ընդհանուր ապառքը, առանց տույժերի/ կազմում է՝ 278.888.032 դրամ:
Հարկատուներին խրախուսելու նպատակով սոցիալապես կարիքավոր 161 հարկատուների՝ 6.586.862 դրամի չափով, տրամադրվել են հարկային արտոնություններ, որից 5.937.117 դրամը (90,14 %) եղել են նախորդ տարիներից կուտակված տույժ-տուգանքները:
Համայնքի 2024 թ բյուջեն ծախսային մասով կատարվել է 95,5 %-ով:
Բյուջեի ծախսային քաղաքականության ոլորտում հիմնական խնդիրը կապիտալ գործառույթների կանխատեսելիության և փաստացի կատարման միջև առկա անհամապատասխանություններն են:
Համայնքում հողերի կառավարման ծրագրի անկանոն և տարերային վարումը զգալիորեն խոչընդոտում է իրացման ենթակա հողատարածքների ժամանակին օտարմանը՝ համայնքի ֆոնդային բյուջեի համալրման օպերատիվության ապահովմանը:
ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ներդրումային ծրագրերի շրջանակներում գերակա շահ ճանաչված անշարժ գույքերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների կատարումը պետական գերատեսչություններում հանդիպում է լուրջ խնդիրների և ձգձգումների, խնդրի լուծման ուղղությամբ առկա են մեծաթիվ դատական հայցեր:

2024 Թ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝

N	Հոդվածի անվանումը	ՊԼԱՆ Հազ.դրամ	ԿԱՏԱՐՎԱԾ Հազ.դրամ	ԿԱՏԱՐՄԱՆ %
	ԸՆԴՀԱՄԵՆ ԾԱԽՍԵՐ՝	3.804.243.782	3.634.198.573	95,5
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝	733.269.902	721.115.364	98,3
	Որից՝			
-	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	293.319.796	290.595.413	99,1
-	Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություններ	364.279.615	360.444.447	98,9
-	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	73.443.291	67.848.304	92,4
-	ՔԿԱԳ բաժնի պահպանում	2.227.200	2.227.200	100
2	Տնտեսական հարաբերություններ	2.028.822.473	1.893.816.681	93,4
	Որից՝	99.052.012	45.346.796	45,8
	ճանապարհային տրանսպորտ	1.929.770.461	1.848.469.885	95,8
3	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	698.599.367	676.395.828	96,8
	Որից՝			
-	Բնակարանային շինարարություն	241.269.730	239.920.262	99,5
-	Ջրամատակարարում և կոյուղի	24.526.495	19.612.580	80,0
-	Բնակ.շինարարություն և կոմունալ ծառայություն	321.377.000	321.377.000	100

-	Արտաքին լուսավորություն	111.426.142	95.485.985	85,7
4	Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով	59.815.240	59.814.600	100
	Որից՝			
-	Մշակութային ծրագրեր	22.606.640	22.606.000	100
-	Սպորտային ծրագրեր	385.000	385.000	100
-	Գրադարանի մասով	11.566.200.	11.566.200	100
-	Մշակույթի մասով - տուն	25.257.400	25.257.400	100
5	Կրթության բնագավառի մասով՝	266.436.800	265.756.100	99,7
	Որից՝			
-	Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝	150.030.600	149.831.600	99,9
-	Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով	116.406.200	115.924.500	99,6
	Որից՝			
-	Արվեստի դպրոցների մասով	76.706.600	76.706.600	100
-	Մարզադպրոցների մասով	39.699.600	39.217.900	98,8
6	Սոցիալական Պաշտպանություն	17.300.000	17.300.000	100
	Որից			
-	Սոցիալական հատուկ արտոնություններ	989.000	989.000	100
-	Սոցիալական կենտրոն	16.311.000	16.311.000	100

Վարչական տարածքներում շարունակվում է խնդիր մնալ հաշվառում չունեցող շուրջ 1500 քաղաքացիների փաստացի բնակվելը և մատուցվող ծառայություններից օգտվելը, որոնց համար պետությունից դոտացիա չի տրվում, նաև այդ պատճառով դոտացիան ռեալ չի արտահայտում համայնքի պահանջարկը:
Աշխատանքներ են տարվել սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն և աջակցություն ցուցաբերելու, սոցիալական լարվածությունը հնարավորինս մեղմելու ուղղությամբ:
Դրամական աջակցություն են ցուցաբերվել սոցիալապես անապահով ընտանիքների, բուժման կարիք ունեցող քաղաքացիների, ուսանողների, զոհվածների ընտանիքների:
Արվեստի 2 դպրոցներում, 2 մարզադպրոցներում և Ապարանի մշակույթի կենտրոնում սովորում են շուրջ 1100 երեխաներ, որոնցից 560-ը՝ անվճար: Վարձավճարների զեղչման արտոնություններ են սահմանվել մանկապարտեզներում և արվեստի դպրոցներում՝ ծնողազուրկ և բազմազավակ ընտանիք ների, զոհվածների, հաշմանդամ, ինչպես նաև նպաստառու ընտանիքների երեխաների համար:
Համայնքային ենթակայության 14 հանդիսասրահներն իրենց կոմունիկացիաներով /սպասք, գազ, էլ. Էներգիա/ անվճար տրամադրվել են բնակիչներին՝ տարբեր միջոցառումների կատարման նպատակով:
Հետևողական աշխատանքներ են տարվել Արցախի հանրապետությունից բռնագաղթված 110 ընտանիքների՝ 438 անդամներով, համայնքի 18 բնակավայրերում տեղավորելու, նրանց սոցիալական, սննդի, տնտեսական, կոմունալ-կենցաղային ամենատարբեր խնդիրների լուծման ուղղությամբ:
Համայնքի սոցիալական կենտրոնում նրանց համար կազմակերպվել են հաշվապահների, մատնահարդարների, անգլերեն լեզվի ուսուցման դասընթացներ:
2024 թ ընթացքում քաղաքացիներից ստացվել են 2653 դիմումներ, որոնք քննարկվել և ընթացք են ստացել ու պատասխանվել սահմանված ժամկետներում:
Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքի բոլոր բնակավայրերի կայուն և համաչափ զարգացումն ապահովելու ուղղությամբ հաստատված հնգամյան և տարեկան զարգացման ծրագրերի կատարման ուղղությամբ, որոնք ներկայացված են կից N 2 հավելվածում:
Միաժամանակ, համայնքում հսկայածավալ աշխատանքներ են կատարվել նաև մասնավոր ընկերությունների և անհատների կողմից, մասնավորապես՝,,Մայլեռ Մաունթայն Ռոզորթ,, ՓԲ ընկերության կողմից ձմեռային սպորտի համալիրի ստեղծման և անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովման,
Քուչակում խմելու ջրի գործարանի կառուցման և ենթակառուցվածքների զարգացման, ջերմոցային տնտեսությունների հիմնման, հյուրատների ստեղծման, առանձնատների և ամենատարբեր այլ շինությունների կառուցման աշխատանքների լայն ծավալը:
2024 թ ընթացքում տրվել է շինարարության 179 թույլտվություն, որը 2023 թվականին տրվածից ավելին է 29-ով, 2022 թվականից՝ 78- ով:
Ընդհանրացնելով 2024 թ գործունեությունը և արդյունքների գնահատումը՝ այն լիարժեքորեն կարելի է ասոցացնել համայնքը 2024 թ երիտասարդական մայրաքաղաք հռչակվելու իրողությանը, որը համայնքում տարվող աշխատանքների գնահատման վկայությունն է:
Գնահատելով կատարված աշխատանքներն ու առաջիկա անելիքները, հաղթահարելով պրոբլեմներն ու դժվարությունները, խնդիր է դրվում պահպանելու ձեռքբերումները և ապահովելու բոլոր բնակավայրերի բավարար կենսագործունեությունը, կայուն, համաչափ և հետևողական զարգացումը:
Համայնքապետարանի գործունեության ապահովման և արդյունավետության բարձրացման գործում արդյունավետ է եղել ավագանու գործնական և համերաշխ աշխատանքը, խնդրները համատեղ ուժերով հաղթահարելու հետևողականությունը, կամքն ու վճռականությունը:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ն.Սիրեկանյան